ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «18» 11 2025 թվականի N 3592-Լ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 737-Ն որոշման հավելվածի 19-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 10-րդ կետի 12-րդ ենթակետը և 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 737-Ն որոշմամբ սահմանված կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագրի մշտադիտարկման պահանջները և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող Էկոնոմիկայի նախարարի տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի
«18» 11 N382-Լ հրամանի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 737-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից իրականացվող մշտադիտարկման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի մշտադիտարկման գործընթացն իրականացվում է Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերին որպես Ծրագրի շահառու դիտարկելու նպատակով և շահառու դիտարկվելուց հետո ստացված աջակցության արդյունավետության և նպատակային օգտագործման հսկողության իրականացման համար:

3. Մշտադիտարկման հիմնական նպատակներն են՝

1) ապահովել պետական աջակցության ծրագրի արդյունավետությունը, թափանցիկությունն ու նպատակային կիրառումը.

2) գնահատել ծրագրի շահառուների կողմից ձեռք բերված արդյունքները.

3) ապահովել ոլորտի զարգացման համար անհրաժեշտ վերլուծական տվյալներ.

4) հսկել պետական բյուջեի միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը:

4. Սույն հավելվածում կիրառվող հասկացություններն ունեն Որոշմամբ սահմանված

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

5. Մշտադիտարկման գործընթացը նպատակաուղղված է շահառուի կողմից սերտիֆիկացման գործընթացի իրականացման փաստաթղթային հիմնավորման վերլուծության, սերտիֆիկացման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ստուգմանը, շահառուի կողմից ձեռքբերված տնտեսական և որակական արդյունքների գնահատման իրականացմանը, այդ թվում՝ արտադրանքի որակի բարելավմանը, արտահանման ծավալի աճին, նոր շուկաների ձեռքբերմանը և այլ դրական ազդեցություններին:

6. Շահառուի կողմից մշտադիտարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, սույն հավելվածի Ձևին (այսուհետ՝ Ձև) համապատասխան, էլեկտրոնային ձևաչափով ներկայացվում է Լիազոր մարմնին՝ secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեին:

7. Ձևում նախնական մշտադիտարկման ընթացքում լրացվում են աղյուսակի բոլոր սյունակները, բացառությամբ 4-րդ, 5-րդ և 9-րդ սյունակների, որոնք լրացվում են վերջնական մշտադիտարկման ընթացքում:

8. Մշտադիտարկումն իրականացվում է՝

1) էլեկտրոնային եղանակով, երբ շահառուն Լիազոր մարմնի secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեին է ներկայացնում Ձևով պահանջվող տեղեկատվությաունը կամ.

2) տեղում փաստաթղթերի և անհրաժեշտ տեղեկատվության ստուգմամբ:

9. Որոշման հավելվածի 21-րդ կետով սահմանված դրական եզրակացությունը ձևավորվում է Ձևով նախատեսված հարցերին շահառուի կողմից ամբողջական և հավաստի պատասխաններ ներկայացնելու արդյունքում:

10. Մշտադիտարկման ընթացքում ներկայացվող և հավաքագրվող տվյալների գաղտնիությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջների համաձայն: Հրապարակման ենթակա կարող են լինել միայն ամփոփ վիճակագրական տվյալները:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

11. Մշտադիտարկման ժամանակացույցը բաղկացած է երկու փուլից՝ նախնական (շահառուի դիմում-հայտը հաստատելու համար) և վերջնական (Ծրագրի կիրառման արդյունքի գնահատման համար):

12. Նախնական մշտադիտարկումը սկսվում է շահառուի դիմում-հայտում և դրան կից

սահմանված Պետական եկամուտների կոմիտեից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

13. Լիազոր մարմինը շահառուին (շահառուի դիմում-հայտում նշված էլեկտրոնային փոստին) է ներկայացնում շահառուի կողմից լրացման ենթակա Ձևը:

14. Շահառուն Լիազոր մարմնի կողմից ներկայացված Ձևը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Լիազոր մարմնի Լիազոր մարմնի secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեին է ներկայացնում Ձևով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը (անհրաժեշտության դեպքում):

15. Նախնական մշտադիտարկման դրական եզրակացության հիման վրա շահառուի դիմում-հայտը հաստատվում է և Որոշման հավելվածի 20-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Ծրագրով նախատեսված փոխհատուցման գումարը փոխանցվում է շահառուի բանկային հաշվին՝ Որոշման 9-րդ կետի 5-րդ ենթակետի և 11-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն:

16. Ձևին համապատասխան տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու դեպքում նախնական մշտադիտարկման արդյունքում տրվում է բացասական եզրակացություն, որի հիման վրա Լիազոր մարմինը մերժում է աջակցության ստացման դիմում-հայտը:

17. Վերջնական մշտադիտարկման փուլն իրականացվում է Ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով՝ շահառուի տարեկան տեղեկատվության հիման վրա՝ ուսումնասիրելով արտահանման, արտադրության, աշխատատեղերի և շուկաների փոփոխությունները:

18. Լիազոր մարմինը պատասխանատվություն է կրում մշտադիտարկման ընթացքում հավաքագրված տվյալների գաղտնիության պահպանման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ձև

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկման իրականացման նպատակով շահառուի կողմից
Լիազոր մարմնին ներկայացվող

	1.	Շահառուի ՀԱՀՀ, անվանում, գտնվելու վայրը գործունեության ոլորտը
	2.	Շահառուի աշխատողների ընդհանուր թիվը՝ սերտիֆիկատների առացմանը նախորդող ժամանակահատվածում (12 ամսվա կտրվածքով)
	3.	Շահառուի վառելիքամթերքի ըստ գործունեության տեսակի
	4.	Շահառուի տարեկան շրջադարձաթղթի և շահույթի փոփոխությունները (սերտիֆիկատի առացմանը հաջորդող ժամանակահատվածում՝ 12 ամսվա կտրվածքով).
	5.	Շահառուի արտահանման ծավալը՝ սերտիֆիկատի սառցմանը նախորդող ժամանակահատվածում (12 ամսվա կտրվածքով) և առանձնաց հետո՝ (Ծրագրի կիրառումից հետո՝ 12 ամսվա կտրվածքով)
	6.	Շահառուի և սերտիֆիկացման մարմնի միջև ունեցած պայմանագրերը
	7.	Սերտիֆիկացմանն ուղղված ծառայությունների կատարման պայմանն ու հաշվետվությունները
	8.	Սերտիֆիկացման ծախսը հավաստող կատարված դրամական հաշիվ-ապրանքագրերը (invoice) և վճարման փաստաթղթերը
	9.	Շահառուի հաշվետվությունը, (սերտիֆիկատով սահմանված պահանջների կատարման ապահովման կարգով՝ տարեկան/եռամսյակային հաջորդող ժամանակահատվածում՝ 12 ամսվա կտրվածքով))

Տեղեկատվությունը լրացվել է ---------- -ի կողմից

կազմակերպության անվանումը

անուն ազգանուն, պաշտոն

ստորագրություն

ամսաթիվ՝ ----------